

Ելնելով ՀՀ կառավարության 2021թ-ի N 764-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության նախադպրոցական հաստատությունների գործունեության ներքին գնահատման չափորոշիչներից և իրականացման կարգից, ներկայացվում է <<Ջրարբի համայնքի մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի 2021-2022 ուսումնական տարվա ներքին գնահատման արդյունքները:

1. Ընդհանուր տեղեկություններ հաստատության մասին

Հաստատության անվանումը	<<Ջրարբի համայնքի մանկապարտեզ>>ՀՈԱԿ
Հասցե	գ. Ջրարբի Հ. Թումանյան 14
Հեռախոսահամար	098170045
Էլեկտրոնային հասցե	jrarbi@bk.ru

1. Ուսումնական հաստատությունը պահպանում է շենքի և տարածքի անվտանգ շահագործումը .

ա. հաստատության ուսումնական տարածքը ցանկապատված է և անվտանգ է սաների ազատ տեղաշարժման համար .

բ. ուսումնական հաստատությունը ունի տարածք՝ մեկուսացված ու հեռացված ավտոճանապարհային գոտուց, աղմուկի, օդի աղտոտման աղբյուրներ հանդիսացող արդյունաբերական կամ այլ օբյեկտներից .

գ. արտակարգ իրավիճակների հատուկ ծառայությունների մեքենաները կարող են անարգել մոտենալ հաստատության շենքին .

դ . ուսումնական հաստատության տարածքը մաքուր է, աղբը կանոնավորապես հավաքվում և դուրս է բերվում հաստատության տարածքից .

ե. ուսումնական հաստատության ողջ տարածքում իրականացվում են միջոցառումներ՝ կրծողների, միջատների, թափառող շների և այլ կենդանիների դեմ .

2. ուսումնական հաստատությունում պահպանված են սաների և աշխատակազմի համար ուսումնական գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ՝ առողջապահության նախարարի 2002թ-վականի դեկտեմբերի 20-ի N 857-Ն հրամանով սահմանված սանիտարահիգիենիկ նորմերը .

ա. ուսումնական հաստատության շենքը վերանորոգված է .

բ. շենքում առկա է դեպի դուրս բացվող պահուստային ելք.

գ .ուսումնական հաստատությունը ապահովված է սարքին վիճակում գտնվող հակահրդեհային անվտանգության լրակազմով.

դ . համակարգչային սարքավորումները , հեռուստացույցը ամուր ե են տեղադրված և ամրացված են .

ե. բաց դարակներից հեռացված են ծաղկամանները ,նկարները ,դեկորատիվ իրերը

զ. միջանցքների հատակները սայթաքուն չեն .

է. կահույքը համապատասխանում է անվտանգ կենսագործունեության պահանջներին,բարվոք վիճակում է.

ը. տարհանման ուղիները ազատ են ավելորդ իրերից և արգելափակված չեն ծանր իրերով .

թ. ուսումնական հաստատության սաների թիվը համապատասխանում է հաստատության լիցենզիայով սահմանված սահմանային տեղերին .

Հաստատության տեսակը	Տարիքային փուլերը	Համակազմի նախատեսվող սահմանային թիվը ըստ լիցենզիայի	2021-թ ուս. տարի	2022-թ ուս . տարի
Մանկապարտեզ	Տարատարիք Նախադպրոցական տարիք	30	30	30
	Ավագ նախադպրոցական տարիք	30	30	30

ժ. խմբասենյակներում սեղանների և աթոռների թիվը և դրանց միջև հեռավորությունը համապատասխանում է առողջապահության նախարարի 2002թ-ի դեկտեմբերի 20-ի N857-Ն հրամանով սահմանված նորմերին .

Յ. ուսումնական հաստատությունը իրականացնում է նպատակային ուսուցողական ծրագրեր,որոնք ուղղված են սաների շրջանում անվտանգ կենսագործունեության և առողջ ապրելակերպի կարողությունների և հմտությունների ձևավորմանը .

ա. ուսումնական հաստատության անձնակազմը և սաները տիրապետում են արտակարգ իրավիճակներում գործելու վարքականոններին .

բ. ուսումնական հաստատությունն ապահովված է լոկալ ջեռուցման անվտանգ համակարգով .

գ. բոլոր խմբասենյակներում առկա են ջեռուցման մարտկոցներ և ջեռուցման ամիսներին խմբասենյակներում ջերմաստիճանը համապատասխանում է առողջապահության նախարարի 2002թ-ի 20-ի դեկտեմբերի N857-Ն հրամանով սահմանված սանիտարահիգիենիկ նորմերին .

դ. Ուսումնական հաստատության միջանցքները ջեռուցվում են և ջերմաստիճանը համապատասխանում է սահմանված նորմերին .

ե. ապահովված է շուրջօրյա հոսող խմելու ջրով .

զ. հաստատության սանհանգույցը ապահովված է շուրջօրյա հոսող ջրով և հիգենայի պարագաներով՝ օձառ ,թուղթ և այլն .

է. դեկտեմբերի N857-Ն հրամանով առկա է սննդի կազմակերպման կետ,որը համապատասխանում է առողջապահության նախարարի 2002թ-ի դեկտեմբերի N857-Ն հրամանով սահմանված սանիտարահիգիենիկ նորմերին .

ը. առկա է բուժկետ և կարող է տրամադրվել առաջին բուժօգնություն .

4.Ուսումնական հաստատությունն իրականացնում է սովորողների ֆիզիկական,հոգևոր,սոցիալական առողջությանը միտված ուսումնադաստիարակչական ծրագրեր և միջոցառումներ .

ա . Ուսումնական հաստատության մանկավարժները իրականացնում են սաների նկատմամբ

բռնության,հոգեբանական ճնշման դեպքերի բացահայտում,դրանց մասին գեկուցում,կանխարգելում,հանրային քննարկում .

բ. ուսումնական հաստատությունն անհատական խորհրդատվությունների,ծնողական ժողովների միջոցով իրականացնում է երեղայի խնամքի ու դաստիարակության,ընտանիքում ծնողական պարտքականությունների նկատմամբ պատասխանատվության բարձրացման,ինչպես նաև բռնության բացառման,երեխայի զարգացման համար անվտանգ միջավայրի ձևավորման հարցերի վերաբերյալ իրազեկման միջոցառումներ .

5. ուսումնական հաստատությունն ունի որակյալ մանկավարժական աննձնակազմ,դաստիարակները տիրապետում են ուսուցման ժամանակակից մեթոդներին

դաստիարակ	Բարձրագույն Մանկավարժական կրթություն	Մանկավարժական մասնագիտության կրթություն	Գիտական կոչում	Վերջին5տարում վերապատրաստվել է	Վերապատրասվել որպես դասախոս	Մանկավարժների տարիքը
Կարինե Սիմոնյան	ոչ	այո	ոչ	այո	ոչ	47
Ջուլիետա Սարգսյան	ոչ	այո	ոչ	ոչ	ոչ	41
Իրինա Կարապետյան	ոչ	այո	ոչ	ոչ	ոչ	41
Անահիտ Գրիգորյան	ոչ	այո	ոչ	ոչ	ոչ	37

ա . մանկավարժական աշխատողներ չունեն միջազգային և տեղական ամսագրերում հրապարակված հոդվածներ,մեթոդական ձեռնարկներ և այլ աշխատություններ .

բ . մանկավարժական աշխատողները տիրապետում են ուսուցման ժամանակակից մեթոդներին և գործնականում կիրառում են .

գ . ուսումնական գործընթացում կիրառում են տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաներ,այդ թվում ինտերնետ .

դ . մանկավարժ աշխատողները չունեն բացակայություններ .

ե . ուսումնական տարվա ընթացքում հաստատությունում ցուցադրական բաց պարապմունքները թվով 4-ն են .

զ . հաստատությունից դուրս պարապմունքների թիվը 4-ն են .

6. ուսումնական հաստատությունում ստեղծված է որակյալ զարգացնող միջավայր .

ա . հաստատությունը չունի մեթոդ կաբինետ,ունի ուսումնասօժանդակ գրականություն .

բ . հաստատությունը ունի խմբասենյակ որը հագեցած է անհրաժեշտ գույքով,ուսումնական պարագաներով,ուսումնադիդակտիկ նյութերով .

7. ուսումնական հաստատության մարդկային,ֆինանսական և նյութական ռեսուրսները տնօրինվում են արդյունավետ հաշվի առնելով`

ա . սան-մանկավարժ հարաբերությունը,

բ . սան-սպասարկող-վարչական անձնակազմ հարաբերությունը,

գ . խմբերի միջին խտությունը

դ . մեկ սանի հաշվով հաստատության տարեկան նախահաշիվը

ե . մանկավարժի միջին աշխատավարձը .

զ . վաչական աշխատողների միջին աշխատավարձը .

է . սպասարկող կազմի միջին աշխատավարձը .

ը . նախահաշվում արտաբյուջետային միջոցների չափը .

թ . ծնողների կողմից դրամական ներդրումների չափը .

ժ . աշխատավարձերի վճարման գծով ծախսերի չափը .

ժա . կոմունալ վճարների գծով տարեկան ծախսերի չափը .

ժբ . նոր գույքի,սարքավորումների ձեռքբերման գծով ծախսերի չափը

8 . ուսումնական հաստատության ծնողական խորհուրդը սերտ համագործակցում է մանկավարժական և վարչական անձնակազմի հետ,նպաստում սաների կրթադաստիարակչական աշխատանքներին .

<p>Ծնողական խորհրդի առաջարկությունները</p> <p>Ուսումնական գործընթացի վերաբերյալ թիվը</p>	<p>Ծնողական խորհրդի կազմակերպած միջոցառումների թիվը</p> <p>Մասնակից սաների թիվը</p>	<p>Ծնողական դորհրդի հանդիպումների թիվը</p>	<p>Հաստատության առօրյայից,իրադարձություններից ծնողների տեղեկացվածության աստիճանը</p>
--	---	--	--

6	4 60 մասնակից սան	12	99%
---	----------------------	----	-----

9. ուսումնական հաստատությունն և համայնքը համագործակցում են .

ա . ուսումնական հաստատության շենքային պայմանների բարելավման . տարածքի բարեկարգման և այլ աշխատանքներում կատարում է ներդրումներ .

բ . ուսումնական հաստատության կողմից համայնքի բնակիչների համար կազմակերպվում է միջոցառումներ .

10. ուսումնական հաստատությունում ներառական կրթության հավասարության ապահովում .

ա . ներառական կրթության զարգացումը որպես նպատակ ամրագրված է հաստատության տարեկան ծրագրում .

բ . ուսումնական հաստատությունն իրականացնում է երեխաների հավասար իրավունքներին, հանդուրժողականությանը նվիրված և այլ նման միջոցառումներ .

11. ուսումնական հաստատության աշխատակազմը արդիականացնում է իր գիտելիքները , հմտությունները ներառական կրթության ոլորտում .

ա . ուսումնական պլանները մշակվում են ` համաձայն նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչի և կրթական ծրագրերի ` հաշվի առնելով սաների կարիքները, ընդունակությունները, հնարավորությունները և ձեռքբերումները .

բ . մանկավարժները գիտակցում են ներառական կրթության վերաբերյալ կարծրատիպերը . ծնողական ժողովների միջոցով իրականացնում են իրազեկման աշխատանքներ .

12. ԿԶԱՊԿ ունեցող երեխաները հավասարապես մասնակցում են հաստատության բոլոր գործընթացներին .

13. ուսումնական հաստատությունում ապահովված է սեռերի և ազգային փոքրամասնությունների երեխաների միջև հավասարությունը .

ա . սեռերի հարաբերակցությունը, ուսումնական հաստատության

բ . ուսումնական հաստատության ազգային փոքրամասնությունների թիվը 2-ն է

գ . սոցիալապես անապահով սաների համար հաստատությունում գործում է զեղծ ` վարձավճարի 50%-ի չափով:

ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ՝

ԻՐԻՆԱ ԵՆԳԻԲԱՐՅԱՆ

ԱՆԴԱՄՆԵՐ

ԴԱՍՏԻԱՐԱԿՆԵՐ՝ ԿԱՐԻՆԵ ՍԻՄՈՆՅԱՆ

ՋՈՒԼԻԵՏԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ԻՐԻՆԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ

ՎԱՐՉԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ՝

ՌՈԶԱ ՂԱԶԱՐՅԱՆ

ԱՌԱԶԱՏԱՐ ՕՊԵՐԱՏՈՐ՝

ԱՐՄԻՆԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԾՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐ

ԱՆԱՀԻՏ ՀԱԿՈԲՅԱՆ

ՍՏԵԼԼԱ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ